

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ
ՇԱԽՄԱՏԻ 7 - ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և 1.19-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով

կարգադրում եմ՝

1. Հաստատել
 - 1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների շախմատի 7-րդ օլիմպիադայի կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.
 - 1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների շախմատի 7-րդ օլիմպիադայի տարածքային փուլի անցկացման կազմակերպիչների անվանացանկը՝ համաձայն N 2 հավելվածի.
 - 2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների շախմատի 7-րդ օլիմպիադայի ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 3 հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների շախմատի 7-րդ օլիմպիադայի կազմկոմիտեին /նախագահ Գ. Բադալյանին/ կանոնադրության պահանջների համաձայն կազմակերպել օլիմպիադայի 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերը:
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ սահմանված կարգով, առանց տարիքային սահմանափակման, ապահովել բոլոր դպրոցականների զանգվածային մասնակցությունը դպրոցականների շախմատի 7-րդ օլիմպիադային և համապատասխան արձանագրությունը եռօրյա ժամկետում ներկայացնել համապատասխան տարածքային փուլի կազմակերպիչներին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ